ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____»_____ 2017թ. N_____

ՈՐՈՇՈՒՄ

ԱՊՐԻԼՅԱՆ ՀԵՐՈՄՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզեի փողոցն անվանակոչել Ապրիլյան հերոսների անվամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝

Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՊՐԻԼՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ապրիլյան Հերոսների անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման դեպքում Երևան քաղաքի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝

Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՊՐԻԼՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ապրիլյան Հերոսների անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝

Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՊՐԻԼՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորհրդային Միության փլուզումից հետո դրա կազմի մեջ մտնող գրեթե բոլոր հանրապետություններում տեղի ունեցան արժեհամակարգային փոփոխություններ: Վերարժևորվեցին պատմական և քաղաքական իրադարձությունները, «հերոսների» ու «հակահերոսների» դերն ու նշանակությունը: Ըստ այդմ՝ փոխվեցին նաև բնակավայրերի, փողոցների, դպրոցների անունները. առաջնությունը տրվեց հայոց պետականության, մշակութային, հասարակական-քաղաքական կյանքի զարգացման մեջ մեծ ներդրում ունեցած դերակատարներին: Համակարգային այս փոփոխություններն, այնուամենայնիվ, կիսատ մնացին. այսօր մայրաքաղաք Երևանում դեռ կան խորհրդային մի քանի գործիչների անուններով փողոցներ ու դպրոցներ: Դրանք այն մարդիկ են, ովքեր որևէ ներդրում չունեն հայոց պետականության զարգացման գործում: Ավելին՝ շատ դեպքերում աչքի են ընկել իրենց հակապետական գործունեությամբ:

Այդ գործիչներից մեկը Միխայիլ Ֆրունզեն է: Ծնվել է 1885թ. փետրվարի 2-ին Բիշքեք քաղաքում, որը ԽՍՀՄ տարիներին կոչվել է Ֆրունզե: Ֆրունզեն խորհրդային ռազմաքաղաքական գործիչ է, որը ղեկավարել է խորհրդա-թուրքական հարաբերությունների կարգավորման պատվիրակությունը, ջերմ հարաբերություններ է ունեցել Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի հետ: Նրա կապը հայ ժողովրդի և հայոց պետականության հետ կարելի է փնտրել միայն հենց այս համատեքստում:

Հաշվի առնելով, որ վերոշարադրյալից բացի, առկա է նաև բնակիչների դիմում-խնդրանքը Ֆրունզեի անվան փողոցը անվանափոխելու մասին՝ առաջարկում ենք այդ փողոցը վերանվանել «Ապրիլյան Հերոսների փողոց» անունով:

2016 թվականի ապրիլին Արցախյան պատերազմի պատմության մեջ հերոսական նոր էջ բացվեց: Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերն ադրբեջանական բանակը հարձակողական գործողություններ ծավալեց առաջնագծի ողջ երկայնքով՝ հրետանու, զրահատեխնիկայի և ավիացիայի ներգրավմամբ: Հակառակորդը հարվածներ հասցրեց նաև խաղաղ բնակավայրերին և մի շարք զորամասերի մշտական տեղակայման վայրերին: Ապրիլ ամսվա ընթացքում հայկական զինված ուժերից մարտական գործողությունների հետևանքով զոհվել է 74 զինծառայող և 17 կամավորական (ընդհանուր՝ 91 հոգի): Զոհված զինծառայողներն ադրբեջական բացահայտ ու լայնածավալ հարձակման ժամանակ չեն նահանջել դիրքերից ու մինչև իրենց կյանքի վերջին րոպեները պայքարել են թշնամու դեմ առանց ընկրկելու, մինչև արյան վերջին կաթիլը: Ապրիլին մեր զինծառայողների կյանքի գնով հաջողվեց կասեցնել հակառակորդի հարձակումն ու ամուր պահել մեր դիրքերը: Քանի որ մեզ համար կարևոր նշանակություն ունի հերոսի կերպարի արժևորումը, հետևաբար թե՛ նախորդ սերնդի, թե՛ մերօրյա հերոսները պետք է փառաբանվեն:

Ապրիլյան հերոսների սխրանքը անմահ պահելու համար մենք պարտավոր ենք Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում ունենալ հայոց պատմության մերօրյա հերոսների անունը կրող փողոց՝ Ապրիլյան հերոսների փողոց :

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնում և առաջարկում ենք Երևանի Ֆրունզեի փողոցը անվանակոչել Ապրիլյան Հերոսների անունով:

ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Երևան քաղաքի ավագանու
«ԵԼՔ» խմբակցության
անդամներ՝

Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԱԽՇՅԱՆ

Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ԱՎԻՆՅԱՆ